Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Ռուսաստանի հայոց թեմի թեմական խորհրդի ատենապետը գոհունակությամբ հաստատեցին, որ ավարտին է մոտենում Մոսկվայում կառուցվող առաջնորդանիստ եկեղեցու եւ հսկայական եկեղեցական համալիրի շինարարությունը, որի բացումը ծրագրվում է գարեվերջին: Ջրուցակիցները վստահություն հայտնեցին, որ երկար սպասված համալիրի բացումը մեծ նշանակություն կունենա Ռուսաստանի հայ համայնքի կյանքում:

Հանդիպմանը քննարկվեցին նաեւ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առջեւ ծառացած զանազան մարտահրավերներ ու խնդիրներ: Մասնավոր անդրադարձ կատարվեց Հայոց Եկեղեցու կարեւոր դերակատարությանը Սփյուռքում հայորդիների ազգային ինքնության պահպանության գործում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՊԱՊԱԿԱՆ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՆՎԻՐԱԿԻՆ

Մարտի 21-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում եւ Վրաստանում նորանշանակ պապական նվիրակ Նորին Սրբազնություն Մարեկ արքեպիսկոպոս Սոլչինսկուն: Ջրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորեց Մարեկ արքեպիսկոպոսին նշանակման առիթով՝ հաջողություն մաղթելով իր առաքելության մեջ:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու հարաբերություններին, մասնավորապես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Վատիկանի միջեւ ձեւավորված սերտ համագործակցությանը: Վերհիշելով Հովհաննես Պողոս Բ. Պապի այցը Հայաստան 2001թ.՝ Նորին Սրբությունն իր խոսքում ընդգծեց, որ նման փոխադարձ այցելությունները նորոգում եւ ամրապնդում են երկու եկեղեցիների կապերը: Այդ առումով կարեւորվեցին նաեւ շփումները եւ համագործակցությունը թեմական եւ ծխական մակարդակի վրա:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի պատասխանատու Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՇԵՆՈՒԴԱ Գ. ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԱՄԱՐ

Մարտի 21-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հոգեհանգստյան արարողություն նորոգ հանգուցյալ Ալեքսանդրիայի եւ Համայն Աֆրիկայի Պապ, Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Շենուդա Գ. Պատրիարքի համար:

Սարեպ արքեպ. Սուքիասյանը Սամբ Գրիգորյանի հետ